



Մարդկային
զարգացման
միջազգային
կենտրոն

International
Center for
Human
Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՎՐԱՏԱՆԱ ԻՐԵՒԻ ԽԱՂԾ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԱՑՈՒՄ

19 Ս ա յ ա թ ն ո վ ա , Ե Ր Ե Լ ա ն

Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Փոփոխություններ իրողություններում և ընկալումներում

Հարավային Կովկասն այլևս անդառնալիորեն եվրոպական քաղաքականության օրակարգում է: Սա իրողություն է, որ դեռ ոչ վաղ անցյալում կարող էր հեշտությամբ հոռետեսների կասկածամտության առիթ դառնալ: Իրականությունը փոխվում է կարծես նաև տարածաշրջանի հոլիստական ընկալման տեսանկյունից: Եթե ընդամենը մի քանի տարի առաջ կարելի էր հուսահատորեն ձեռք թափ տալ, թե որքան էլ ջանանք, կաշվից դուրս գանք ու առաջանցիկ նվաճումներ արձանագրենք, միևնույն է, մեր երկրներից յուրաքանչյուրը դատապարտված է «սպասելու» մյուսներին և եվրոպական աստիճաններով բարձրանալու շնորհը խմբային մուտքի-արտոնագրով է (групповая виза) միայն, ապա այսօր իրականությունն այլ է նաև այս հարցում: Եվրոպան, կարծես, հանել է փոխկապակցվածության շղթաները Հարավային Կովկասի երկրներից՝ տարածաշրջանն ավելի շուտ սկսելով դիտարկել որպես երեք երկրների համախումբ, քան միասնական միավոր: Սա են ցույց տալիս գործընթացները եվրոպական հարևանության ծրագրի շրջանակներում, սա են վկայում նաև Եվրամիության տարաստիճան պաշտոնյաների հայտարարությունները:

«Ընդամենը մի քանի տարի առաջ մենք ամեն պատեհ առիթով շեշտում էինք, թե «Մենք խրախուսում ենք տարածաշրջանային համագործակցությունը», այսօր մենք հասկանում ենք, որ դա իրականում նշանակում է ասել «մենք ձեռքներս լվանում ենք ձեր խնդիրներից», - մշում է գերհայտնի միջազգային կառույցներից մեկի փորձագետը: Երկրների հետ անհատական աշխատանքն արդեն գործնական կիրառություն է ստացել թե՛ եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի, թե՛ ՆԱՏՕ-ի Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի մշակման և իրականացման և թե՛ այլ հարթություններում:

Իրողությունները փոխվում են, երեկվա ցանկություններն այսօր իրականություն են դառնում, իսկ նոր իրականությունն իր հերթին նոր մարտահրավերներ է առաջադրում:

Հայաստան-Ադրբեջան/ Վրաստան

Քննարկումների սեղանի շուրջ հավաքե՛ք ազատամիտ հայերի ու ադրբեջանցիների և հարցե՛ր տվե՛ք իրականության ու կոնֆլիկտի լուծման վերաբերյալ: Ակնհայտորեն առաջին հերթին կլսե՛ք ժողովրդավարացման հրամայականի, խոսքի ազատության, ազատ և արդար ընտրությունների, մարդու իրավունքների, եվրաինտեգրման կարևորության, այս ամենի պակասի, կարիքի, կեղծամամանակման հոգնեցուցիչ լինելու և անհեռանկարայնության վերաբերյալ: Երիտասարդ հայերն ու ադրբեջանցիները (կամ առնվազն դրանց խիստ որոշակի հատվածը) երկրներում առկա խնդիրների լուծումը տեսնում են եվրաճանապարհին, ավելին՝ պարզապես ուզում են ապրել եվրոպական երկրում: Երիտասարդության այս հատվածն անշեղորեն աճում է, աճում է նաև նրանց ակտիվությունը, և սա փաստ է:

Քննարկումների սեղանի շուրջ հավաքե՛ք Վրաստանի իշխանական շրջանակների տարաստիճան պաշտոնյաների և հարցե՛ր տվե՛ք իրականության վերաբերյալ: Ակնհայտորեն առաջին հերթին կլսե՛ք ժողովրդավարացման հրամայականի, եվրաինտեգրման կարևորության, այդ ուղղությամբ իրենց ոգևորության, նախահարձակ լինելու, չսպասելու, գործելու, առաջանցիկ նվաճումներ ձեռքբերելու պատրաստակամության և կամքի վերաբերյալ: Բոլոր մակարդակների քաղաքականություն մշակողները Վրաստանում

իրենց երկրում առկա խնդիրների լուծումը տեսնում են գերազանցապես եվրաճանապարհին, ավելին՝ պարզապես ուզում են ապրել եվրոպական երկրում: Սա նույնպես փաստ է:

Ի՞նչ է ստացվում

Թեպետ Հարավային Կովկասում երեք երկրների համագործակցության կարիքն ու հնարավոր պտուղներն անընդհատ շեշտվում են միջազգային տարատեսակ կառույցների կողմից, ակնհայտորեն, հատկապես քաղաքական ուղղվածություն ունեցող միջազգային կառույցների մոտ առկա է վերաբերմունքի նմանություն միայն երկու երկրների՝ Ադրբեջանի և Հայաստանի հանդեպ: Միջազգային շատ տեսակետներում և հաշվետվություններում Ադրբեջան և Հայաստան անվանումների տեղափոխությունից դրանց միտքը կմնա նույնը և չես էլ կարող կողմնորոշվել, թե այդ երկու երկրներից որի՞ մասին է խոսքը: Հայաստանը և Ադրբեջանը վարում են հստակ և կայուն քաղաքականություն, որը հաճախ այնպիսի գնահատականների է արժանանում, ինչպիսիք են կայունությունը, անվտանգությունը, իրատեսականությունը, պրագմատիզմը և ի վերջո... Լճացումը: Թերևս մեր տարածաշրջանի երկրների հանդեպ վերաբերմունքը հենց մենք ենք որոշում և այս եռանկյան մեջ երկուսը չեն հավատում լուրջ փոփոխությունների, քայլեր են անում լոկ գործընթացներից դուրս չմնալու նպատակով, իսկ մեկը հավատում և ընգծված պրոակտիվ նախաձեռնողականություն է դրսևորում: Որքան էլ պարադոքսային է, Հայաստանի և Ադրբեջանի առանձին մասնագետներ Վրաստանին մեղադրում են հիմնականում իրատեսական չլինելու և ռիսկային քաղաքականություն վարելու մեջ: Միթե՞ փոփոխության հնարավորության հանդեպ հավատն իրոք անհույս ռոմանտիզմ է, իսկ լճացումը՝ իրատեսական զարգացում: Գուցե մենք հավատում ենք այս բանաձևին, սակայն այսօր եվրոպան և այլք նախընտրում են լոկոմոտիվի դերում տեսնել միայն նրան, ով իրապես հավատում է և նախանձախնդրությամբ է մոտենում փոփոխություններին:

Իսկ վերոհիշյալից ստացվում է այն, որ Վրաստանն իր նախանձելի և գովելի ակտիվությամբ ո՛չ միայն գրավել է տարածաշրջանային առաջամարտիկի դերը եվրոպականացման ճանապարհին, այլև, կարծես, հիմնական եվրատլանտյան և եվրոպական խոշոր դերակատարների համար դառնում է այն խայծը, որով վերջինները պատրաստվում են «որսալ» տարածաշրջանի մյուս երկու երկրներին: Արդյունքում փոխվում է նաև նրանց աշխատառճը տարածաշրջանում. նրանք հաճույքով «աշխատում են» Վրաստանի ներկա, իսկ Ադրբեջանի ու Հայաստանի՝ վաղվա քաղաքականություն կերտողների հետ:

Համառոտագիրը մշակվել է ՄՁՄԿ 2007թ-ի մարտի 23-ին կայացած՝ «Միջազգային կազմակերպությունների դերը Հարավային Կովկասի երկրների միջև համագործակցության խթանման գործում» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: